

ՆԱԽԱԳԱՀ ԱՌՈՒՆԻՆ
ԻՐ ՅՂԱԾ ՆԱՄԱԿԻՆ ՄԵՋ

ԹՐԱՄՓ. «ԿԵ ՀԻԱՆԱՄ ՆԵՐԿԱՅ ՓՈԻԼԻՆ ԼԻԲԱՆԱՆԻ ՉԵՐ ՎՃՈՒԿԱՆ ՂԵԿԱՎԱՐՈՒԹԵԱՄԲ»



Հանրապետության նախագահ ժոզեֆ Աուն Միացեալ Նահանգներու նախագահ Տանըլտ Թրամփէն ստացաւ նամակ մը, որուն մէջ վերջինս իր ուրախութիւնը կը յայտնէ 21 յուլիսին Սպիտակ տան մէջ նախագահ Աունը ընդունելուն համար եւ իր հիացմունքը կը յայտնէ ներկայ փուլին անոր Լիբանանի ղեկավարութեան նկատմամբ:

«Պատիւը ունի՞ ձեզ Սպիտակ տան մէջ ընդունելու՝ բառին բուն իմաստով պատմական այցելութեան մը ընթացքին, որ շուրջ երկու տասնամեակէ ի վեր լիբանանեան պետութեան ղեկավարի մը կողմէ առաջինն էր: Այն պահուն, երբ Միջին Արեւելքը ականատես կը դառնայ հակամարտութեան մը, կը հիանամ Լիբանանի եւ անոր ժողովուրդին ձեր վճռական ղեկավարութեամբ», գրեց ան:

Թրամփ նախագահ Աունին շնորհակալութիւն յայտնեց իրեն մայրիկի «մեծ վզնոց» աստիճանի ազգային շքանշանով պարգևատրման համար եւ ըսաւ. «Այս նախաձեռնութիւնը արտակարգ մեծաբանք մըն է, որ կը մարմնաւորէ քաջարի լիբանանեան ոգին, եւ պիտի հպարտանամ այս վերաբերմունքով՝ զայն նկատելով աշխարհի տարածքին խաղաղութեան, անվտանգութեան եւ բարգաւաճման նկատմամբ հասարակաց յանձնառութեան խորհրդանիշ մը»:

Սպիտակ տան ղեկավարը յայտնեց, որ ինք եւ Միացեալ Նահանգներու առաջին տիկին Մելանիա Թրամփը նախագահ Աունին ու առաջին տիկին Նեհմաթ Աունին եւ անոնց ընտանիքին լաւագոյն մաղթանքներ կ'ուղղեն:

ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ . . .

Շարունակուած Ա. Էջէն

Այս գիտակցութեամբ հայ ժողովուրդը կերտեց ու պահպանեց իր անկախութիւնը. եւ երբ պատմութեան պայմաններուն պարտադրանքով կորսնցուց՝ զայն վերահաստատելու տեսլականը վերածեց ամենօրեայ պայքարի:

Արդարեւ, հայրենիքին հզօրացման ու զարգացման եւ մեր ժողովուրդին անասանութեան ու յանձնարարական աղբիւրը անկախութիւնն է:

Հայաստանի անկախութեան նշումը պատգամ մըն է ուղղուած իւրաքանչիւր հայուն՝ հաստատրիմ ըլլալու անկախութեան որպէս սրբազան արժէք:

ՆԻՒ ԵՈՐՔԻ ՄԵՋ ՍԱԼԱՄԻ ԴԵՏ ՀԱՆԴԻՊՈՒՄԻ ԸՆԹԱՋՔԻՆ

ԷՐՏՈՂԱՆ. «ԼԻԲԱՆԱՆԻ ՄԵՋ ՖԻՆԻԼ-Ի ԱՅԼԵՆՏՐԱՆՔԸ ԵՂՈՂ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՆԱԽԱՋԵՌՆՈՒԹԵԱՆ ՄԸ ԿԱՐԻՔԸ ԿԱՅ»

Վարչապետ Նաուաֆ Սալամ Նիւ Եորքի մէջ ՄԱԿ-ի Ընդհանուր Ժողովի ծիրին մէջ հանդիպում ունեցաւ Թուրքիոյ նախագահ Ռեճեփ Թայիփ Էրտողանի հետ, որ յայտնեց, որ Թուրքիան լիբանանցի ժողովուրդի կողքին կը կանգնի եւ կը շարունակէ մարդասիրական օժանդակութիւն ու բժշկական աջակցութիւն տրամադրել:

Էրտողան նշեց, որ կարիքը կայ միջազգային նախաձեռնութեան մը, որ Լիբանանի մէջ ՖԻՆԻԼ-ի այլընտրանքը ըլլայ:

Սալամ նաեւ հանդիպում ունեցաւ Իրաքի վարչապետ Ալի Չէյտիի հետ՝ ներկայութեամբ արտաքին գործոց նախարար Եուսէֆ Ռաժժիի եւ Իրաքի արտաքին գործոց նախարար Ֆուատ Հուէյնի:

Հանդիպումի ընթացքին անդրադարձ կատարուեցաւ երկկողմանի յարաբերութիւններուն եւ շրջանին մէջ վերջին զարգացումներուն, ինչպէս նաեւ յուլիսին Սալամի Պաղատա այ-



ցելութեան արդիւնքներուն, մասնաւորաբար ուժանիւթի, փոխադրութեան եւ շրջանային կապակցութեան ծրագիրներուն:

Լիբանանի եւ Իրաքի առջեւ ծառացած հասարակաց մարտահրաւերներու լոյսին տակ երկու կողմերն ալ հաստատած են իրենց յանձնառութիւնը՝ ամրապնդելու պետութեան եւ անոր հաստատութիւններուն հեղինակութիւնը, ինչպէս նաեւ շարունակելու պետութեան գէնքի մենաշնորհման հոլովոյթը՝ իբրեւ գերիշխանութեան պահպանման եւ կայունութեան ամրապնդման հիմնարար յենասիւն:

ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ԿԱՐԳ ԼՈՒՐԵՐ

- ԱՐԺԱՆԹԻՆՏԻ դատուոր Տանիէլ Ռաֆէ-քաւ Եօթը իրանցիներ ու լիբանանցի մը պաշտօնապէս ամբաստանեց 1994 թուականին Պուէ-տու Այրեսի մէջ հրէական «Ամիա» միութեան կեդրոնի ականահարման մեղսակցութեան կասկածանքով:

- «Յարձակումին որոշումը օգոստոս 1993 թուականին տրուեցաւ իրանեան վարչակարգի բարձրագոյն մակարդակով, եւ անոր գործադրութիւնը վստահուեցաւ Յըզպալլային», նշեց ան:

- «ՄՈՒՏՈՒՆ». «ՄԱԿ-ի Ընդհանուր Ժողովի ծիրին մէջ վարչապետ Սալամի եւ Իրանի նախագահի միջեւ տեղի պիտի ունենայ հանդիպում մը, որ երկար ամիսներէ ի վեր երկու երկիրներու պաշտօնատարներուն միջեւ առաջինը պիտի ըլլայ, եւ անոր ընթացքին պիտի ընկալուին տարբեր յարաբերութիւնները»:

- ՊԱՇՏՈՆԱՍԱՐ մը

- «ԺՈՒՄԻՈՐԻԱ» օրաթերթին. «Նախարարական բարեփոխումը բնական քայլ մըն է, որ նախապէս կիրարկուած է, սակայն նոյնիսկ եթէ կարգ մը նախարարներ փոխելու ուղղուածութիւնը ճիշդ է, արդեօք ներկայ պահը եւ ներկայ պայմանները ատոր համար յարմար են»:

- ԲԱՐԶՐԱՍԻԺԱՆ պաշտօնատար մը «ԺՈՒՄԻՈՐԻԱ» օրաթերթին. «Անացն ներածականներու նախարարական բարեփոխում կ'առաջարկեն, երբ մօտիկ անցեալին խորհրդարանին մէջ ընդհանուր քննարկման ընթացքին կառավարութեան վերահսկողութիւնը յայտնեցին, ինչ որ զարմանալի է եւ իրապէս հարցականներ կը ստեղծէ, մանաւանդ որ այս առաջարկը պարզապէս «ձայնային ռումբ» է»:

- «ՆԻՏԱ ՌԻԱԹԱՆ» օրաթերթը. «Զաթարն ու Թուրքիան գաղտնի հաղորդակցութիւններ եւ ջանքեր կը ղեկավարեն հարաւային Լիբանանի կացութեան ու հետագային Յըզպալլայի իրավիճակին լուծում գտնելու համար»:

Օրաթերթի տեղեկութիւններուն համաձայն, Զաթարն ու Թուրքիան անշատ կերպով կը գործեն, եւ միացեալ նախաձեռնութիւն գոյութիւն չունի:

- ԴԻԱՆԱԳԻՏԱԿԱՆ աղբիւրներ «Տիար» օրաթերթին. «Վարչապետին կարգաւորել փորձած երկու գլխաւոր թղթածրարներն առաջինը շրջագծային համաձայնութիւնը տեղաքայլէ փրկելուն եւ իսրայէլեան մագցումը զսպելուն, իսկ երկրորդը՝ հարաւային Լիբանանի մէջ յետֆԻՆԻԼ-եան փուլի կարգաւորման նկատմամբ ամերիկեան ցուցանիշները քաջալերական չեն թուիր»:

- ՆԱԽԱՐԱՐԱԿԱՆ աղբիւր մը «Շարք Աուսաթ» օրաթերթին. «Նախագահ Աուն Ֆրանսայի նախագահ Մաքրոնի եւ Յորդանանի թագաւոր Ապտալա Բ-ի հետ իր ժողովի ընթացքին մտաւախութիւն յայտնեց, որ հարաւային Լիբանանի մէջ բաց ստեղծուի, եթէ կարելի չլլայ ՖԻՆԻԼ-ի այլընտրանքին շուրջ համաձայնութիւն գոյացնել»:

ԱՅՑԵԼԵԼՈՎ ՆԱԽԱԳԱՀ ԱՌՈՒՆԻՆ՝

ԺՈՄՊԼԱԹ. «ԿԸ ԶՕՐԱԿՅԻՆՔ ԲԱՆԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ, ԵԹԷ ԱՍՏԻՃԱՆԱԿԱՆ ԿԱՄ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ՀԵՌԱՅՄԱՆ ՅԱՆԳԵՑՆԵՆ»



Ընկերվար յառաջդիմական կուսակցութեան նախկին ղեկավար Ուալիտ Ժոմպլաթ երկուշաբթի կէսօրէ ետք, իր որդիին՝ Ընկերվար յառաջդիմական կուսակցութեան ղեկավար, երեսփոխան Թէյմուր Ժոմպլաթի եւ երեսփոխան Ուալէ Ապու Ֆաուրի ընկերակցութեամբ այցելեց նախագահական պալատ, ուր հանդիպում ունեցաւ հանրապետութեան նախագահ ժոզեֆ Աունի հետ:

Հանդիպումը առիթ մը եղաւ քննարկելու Լիբանանի եւ շրջանի վերջին զարգացումները:

Ժոմպլաթ իր նոր գիրքէն՝ «Այս մերձաւոր Արեւելքին մէջ ճակատագիր մը՝ քաղաքացիական պատերազմէն մինչեւ անկարելի խաղաղութիւն» գիրքէն օրինակ մը նուիրեց հանրապետութեան նախագահին:

Շար.ը՝ էջ 8

ԱԶԳԱՐԱՐԱԳԻՐ-ԿՈՉՆԱԳԻՐ

Մեծայաճ գրք. Զարլոս Փիեռ Սապունճեան, Յարգելի՛ պարոն, Լիբանանի հայոց թեմի Դատաստանական խորհուրդ, իր ուրբաթ, 15 մայիս 2026 թուականին կայացուցած նիստին, որուն ներկայ չգտնուեցաք, զբաղեցաւ ձեր ամուսնալուծման հարցով:

Սոյն ազդարարագիրով ձեզ կը հրաւիրենք Դատաստանական խորհուրդի նիստին, որ տեղի պիտի ունենայ ուրբաթ, 9 հոկտեմբեր 2026-ի կէսօրուան ժամը 12:00-ին, Պուրճ Նամուտի Ազգային առաջնորդարանին մէջ, պաշտպանելու համար ձեր դատը անձամբ կամ փոխարինող անձի միջոցով:

Չներկայանալու պարագային, ձեր բացակայութիւնը ներկայութեան համազօր պիտի նկատուի եւ արձակուի համապատասխան վճիռ:

ԴԱՏԱՍՏԱՆԱԿԱՆ ԽՈՐՀՈՐԴ
ԼԻԲԱՆԱՆԻ ՀԱՅՈՑ

Շար.ը՝ էջ 8

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ «ԳԱՄՊԱՐ ԻՓԵԿԵՆ» ԹԱՏԵՐԱՌՈՒՄԸ
ԿԸ ՆԵՐԿԱՅԱՆԷ

ԳՐՈՂ՝ ՍԻՐՅՈՂ ԳՐՈՂ

ԱՄԱԿԻՈ ՅՕ

(Կարգաւորութիւն)

ԲԵՆԱՐԻՈՂ
ՅԱԿՈԲ ՏԵՐ ՂՈԿԱՍԵԱՆ

9-10-Ի ԴՈԿՏԵՄԲԵՐ, 2026 | ԵՐԵՎԱՆԻ ժԱՄԸ 8:00-ԻՆ
«ՅԱԿՈԲ ՏԵՐ ՄԵԼԵՈՆԵԱՆ» ԹԱՏԵՐԱՐԱՐԱՅ

ENGLISH SUBTITLES

Տոմսերու համար հեռաձայնել 03-852712 թիւին,
ինչպէս նաեւ ելոյթի օրերը կիշէեն:

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ «ԱՄԱԿ ԵՓԵԿԵՆ»
ՏՊԱՐԱՆ-ՀՐԱՏԱՐԱԿԱՆՈՒՄ
1931-2026

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՀՐԱՏԱՐԱԿԱՆ 95-ԱՍԵԱԿԻՆ ԱՌԻԹՈՎ
Արցախի Նուիրում՝
ԴԱՏԱՄԱՏԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹԵԱՆ 3 ՀԱՏՈՐԵՐՈՒ

ԸՆՈՐՀԱՇԱՆՈՒՄ
ԵՒ
ԱՐՑԱԽԻ ԳԵՂԱԿԱՐԻՉՆԵՐՈՒ
ՓՈՒՅԱՇԱՆՈՒՄ

Զորեքշաբթի,
23 սեպտեմբեր 2026
երեկոյեան ժամը 7:00-ին,
Համազգայինի
«Լիւսի Թիւթիւնճեան»
ցուցասրահին մէջ:

Արցախ.
Անվարտ
Պատերազմ
Artsakh
The Unfinished War
Արցախ:
Незавершённая война

Յուշահանրէլ սր կը թարգմանուի
մինչեւ 26 սեպտեմբեր,
առաւօտեան ժամը 9:00 էն
երեկոյեան ժամը 7:00:

ԲՈՂՈՔԱԳԻՐ ՅՂՈՒԵՑԱԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԻԻԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ

Արցախեան, հայաստանեան եւ սփիւռքեան շարք մը հասարակական կազմակերպութիւններ ու գործիչներ բողոքագիրով մը դիմեցին Յայաստանի մէջ հաւատարմագրուած դիւանագիտական ներկայացուցչութիւններուն՝ իրենց ընդդէմ ու մերժումը արտայայտելով Ազրայէճանի կողմէ բռնադատուած Արցախի տարածք տարբեր երկիրներու ներկայացուցիչներուն այցելութեան եւ այդ այցելութիւններուն ընթացքին կատարուած անթոյատրելի հրապարակային գործողութիւններուն դէմ:

Բողոք-դիմումին մէջ կը նշուի. «Նման այցերը չեն կարող դիտարկուել բացառապէս իբրեւ մասնաւոր, զբօսաշրջային կամ մշակութային միջոցառումներ: Դրանք իրականացում են մի տարածքում, որտեղից 2023 թընականի սեպտեմբերին բռնի տեղահանուել է բնիկ հայ բնակչութիւնը, իսկ հայկական պատմամշակութային ժառանգութիւնը եւթարկուել է նպատակաւորօրէն ոչնչացման, փոփոխման, իւրացման եւ դրա հայկական ինքնութեան ջնջման:

«Առանձնայատուկ մտահոգութիւն են առաջացում Ստեփանակերտ, Շուշի, Գանձասար, Դադիկանք եւ հայկական մշակութային ու հոգեւոր ժառանգութեան այլ վայրեր տարբերկերէյ ներկայացուցիչների այցելութիւնները, որոնք ուղեկցում են հրապարակային լուսանկարներով եւ պաշտօնա-



կան յայտարարութիւններով՝ առանց տեղահանուած հայ բնակչութեան վիճակի եւ նրա մշակութային ժառանգութեան աղետալի վիճակի պատշաճ գնահատման:

«Նման գործողութիւնները Ազրայէճանի կողմից աշխուժ կերպով օգտագործուել են՝ միջազգային ճանաչման եւ ընդունելութեան տպաւորութիւն ձեւաւորելու համար՝ քաղաքական-իրական, Լեռնային Դարաբաղի համամարտութիւնը ուժի ապօրինի կիրառմամբ եւ ցեղային գտմամբ լուծելու քաղաքականութեան նկատմամբ:

«Յիշեցնում ենք, որ 2021-ի դեկտեմբերի 7-ին ՄԱԿ-ի Արդարադատութեան միջազգային դատարանը «Յայաստանն ընդդէմ Ազրայէճանի» գործով պարտաւորեցրել է Ազրայէճանին ձեռնարկել անհրաժեշտ միջոցների՝ հայկական մշակութային ժառանգութեան նկատմամբ բարբարոսութեան եւ պղծման գործողութիւնները կանխելու եւ պատժելու համար, ներառել եկեղեցիների, պաշտամունքի վայրերի, յուշարձանների եւ գերեզմանատների

Շար.ը՝ էջ 6

ՀԱՅԿԱԶԵԱՆ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆՐԱԷՍԻ 45-ՐԴ ՀԱՏՈՐԻՆ ԵՐԿՈՒ ԳԻՐՔԵՐՈՒՆ ՇՆՈՐՀԱՀԱՆՐԱԷՍԸ

11 սեպտեմբեր 2026-ին, Յայաստանի Գիտութիւններու ազգային ակադեմիայի Զիմարար գրադարանի սրահին մէջ տեղի ունեցաւ Զայկազեան հայագիտական հանդէսի 45-րդ հատորին զոյգ գիրքերուն շնորհահանդէսը:

Բացումը կատարեց Զիմարար գրադարանի տնօրէն Մայա Գրիգորեանը: Ան բարձր գնահատեց հանդէսը, միաժամանակ մեծ գոհունակութիւն յայտնեց գրադարանին եւ Զայկազեան համալսարանին միջեւ եղած գործակցութեան համար՝ նշելով, որ այդ գործակցութիւնը փոխադարձ է, արդիւնաւետ եւ չի կրեր ձեւական բնոյթ:

Ապա խօսք առաւ Զայաստանի Գիտութիւններու ազգային ակադեմիայի Պատմութեան հիմնարկի երիտասարդ տնօրէն դոկտոր Զամա Սուքիասեանը, որ անդրադարձաւ հանդէսին կարելորդ եւ եական դերակատարութեան՝ հայագիտական ծիրին մէջ: Ան նշեց, որ 15 տարիներ առաջ ինք եւս աշխատակցած է հանդէսին եւ յիշեց, թէ ինչպէ՛ս այն ատեն զարմացած էր հանդէսի խմբագրակազմին քաջալերական ու հոգածու վերաբերումէն: Ան մատնանշեց հանդէսին իւրայատկութիւններն քանի մը հատը՝ նկիւրնու բազմազանութեան, այժմեականութեան,



այլազանութեան եւ բազմակարծութեան առումներով, շեշտաւորեց հանդէսին հրատարակչական հետեւողականութիւնը, ու ակնարկելով 45-րդ հատորին երկրորդ գիրքին մէջ տեղ գտած սփիւռքահայ գրականութեան նուիրուած հարցումներուն, Սուքիասեան ընդօժեց, որ խմբագրական կազմը դիմած է արիւնտական բանականութեան՝ բացատրելով, թէ հանդէսը ինչ տարողութեամբ կ'առնուի ժամանակակից զարգացումներուն:

Շար.ը՝ էջ 6

ՖԵՐԱՅԵԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԱՐԺԱՐԱՆԻ ԱՇԿԵՐՏՆԵՐՈՒՆ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՆԱԽԱԶԵՆՈՒԹԻՒՆԸ



12 սեպտեմբեր 2026-ին, Արեւմտեան Ամերիկայի Ֆերահեան ազգային վարժարանի աւարտական կարգի աւելի քան 55 աշակերտներ, գլխաւորութեամբ վարժարանի տնօրէն Սօսի Շանկեանի, այցելեցին ԶՕՄ-ի Զայաստանի կեդրոնը եւ ազգային այնպիսի կարեւոր պարտականութիւն մը կատարեցին, որ բարի օրինակ կը հանդիսանայ յատկապէս մեր երիտասարդութեան:

Անոնք ամբողջ տարին տարբեր ձեւերով կազմակերպելով, կարկանդակ եւ տուրմ վաճառելով համազանկած էին կոկիկ գումար մը, զոր անձամբ յանձնեցին հայրենիքի պաշտպանութեան մարտերուն գոհուած մեր նահատակ հերոսներու 15 ընտանիքներու: Վերջիններուն եւ աշակերտներուն յուզիչ հանդիպումը տեղի ունեցաւ նշուած ժամուն ԶՕՄ-ի «Կարօ եւ Ալիս Կիւրեղեան» սրահին մէջ: Զեռուար Ամերիկայէն եկած աշակերտները յուզումախառն արցունքներով ողոնեցին մեր նահատակ հերոսներու մայրերն ու այրիները, լսեցին անոնց թանկագին կորուստներուն մասին, քաջալերեցին զանոնք չտկարանալու, որովհետեւ իրենց կորուստը այն յստակ ապացոյցն է, որ հայութիւ-

նը իր քաջարի գաւակներով, կեանքի գնով պիտի շարունակէ պաշտպանել մեր բոլորին հայրենիքը:

Սրտի խօսքեր փոխանցեցին Ֆերահեան Ազգային վարժարանի տնօրէն Սօսի Շանկեանը, վարժարանի հայերէն բաժնի պատասխանատու Արա



Գազանճեանը, ԶՕՄ-ի Կեդրոնական վարչութեան անդամ Չոյա Զոյաբեանը, ԶՕՄ-ի Զայաստանի Շրջանային վարչութեան ատենապետ Մարօ Բէշիշեանը եւ ԶՕՄ-ի Արցախի մասնաճիւղի ատենապետ Մելանիա Բալայեանը:

Կարգ մը աշակերտներ իրենց հերթին հետաքրքրական հարցումներ ուղղեցին մեր անմահ հերոսներու հարազատներուն: Այս այցելութիւնը դրական ազդեցութիւնը ունեցաւ այցելու աշակերտներուն վրայ, որոնք խոստացան չմոռնալ մեր ազգի նահատակ հերոսները եւ շարունակել իրենց ազգային պարտականութիւնները՝ յաճախ այցելելով հայրենիք:

ՀՕՄ-Ի ԱՐՑԱՆԻ ՄԱՍՆԱԾԻՂԸ ՈՒՐԱՆՈՒԹԻՒՆ ԵՒ ՋԵՐՄՈՒԹԻՒՆ ՊԱՐԳԵՒԵՑ ՆԱՀԱՏԱԿ ՀԵՐՈՍՆԵՐՈՒ ԶԱԽԱԿՆԵՐՈՒՆ

Սեպտեմբեր 16-ին ԶՕՄ-ի Արցախի մասնաճիւղը հերթական ձեռնարկով խիստ եւ բերկրանք պարգեւեց արցախցի փոքրիկներուն:

Ձեռնարկը կազմակերպուած էր այն մանուկներուն համար, որոնք լոյս աշխարհ եկած էին 2020 եւ 2023 թուականներու մարտական գործողութիւններու ընթացքին՝ իրենց հայրերուն նահատակութենէն ետք, իսկ մայրերը բռնի տեղահանուած էին՝ կորուստի բազմապատկուած ցաւը իրենց սրտին:

ԶՕՄ-ի Արեւմտեան շրջանի հովանաւորութեամբ կազմակերպուած ժամանցային ձեռնարկին ընթացքին մանուկները շատ լաւ ժամանակ անցուցին մանկական գծանկարներու հերոսներու հետ՝ երգեցին, պարեցին, խաղացին եւ հաճելի նուէրներով ու բարձր տրամադրութեամբ բաժնուեցան:

Ըստ մայրիկներու վկայութեան, մանուկները մեծ ուրախութեամբ անցուցին օրը եւ ստացան իրենց երազած նուէրները:

«Շատ ուրախ ենք, որ կարելիութիւն ունեցանք արցախցի մեր մանուկներուն թէկու՛զ մէկ օրը տօնի վերածելու, ժպիտներ պարգեւելու եւ անոնց անկեղծ ու անմիջական յոյզերուն ականատես ըլլալու: Թող



մեր փոքրիկներուն իւրաքանչիւր օրը լեցուած ըլլայ մանկական ծիծաղով, սիրով եւ լուսաւոր պահերով», նշեցին ԶՕՄ-ուիիները:

«ԱՐՑԱԽԵԱՆ ՄՇԱԿՈՅԹԻ ԹՈՒԱՅԻՆ ՏՈՒՆ»-Ը՝ ԱՐՑԱԽԻ ԺԱՌԱՆԳՈՒԹԻՒՆԸ ՊԱՅՊԱՆԵԼՈՒ ԿԱՐԵԼՈՒԹԻՒՆ

15 սեպտեմբերին Երեւանի մէջ ներկայացուեցաւ Արցախի ոչ նիւթական մշակութային ժառանգութեան հաւաքագրման, պահպանման եւ հանրայնացման նպատակով ստեղծուած «Արցախեան մշակոյթի թուային տուն»՝ artsakhian.org հարթակը:

Անկա տեղծուած է Արցախի պետական նախկին նախարար, ներկայիս ապօրինաբար Պաքոյի բանտը պահուող Ռուբէն Վարդանեանի հիմնադրած



«Մենք ենք մեր սարերը»՝ զարգացման գործակալութեան նախաձեռնութեամբ՝ «Գալուստ Կիւլպէնկեան» հիմնարկութեան աջակցութեամբ: Այս մասին կը յայտնեն «Մենք ենք մեր սարերը» զարգացման գործակալութենէն:

2023 թուականի սեպտեմբերին Արցախի հայ բնակչութեան բռնի տեղահանումէն ետք վտանգուեցաւ նաեւ մշակութային ժառանգութեան բնական փոխանցման շարունակականութիւնը: Բարբառք, բանահիւսութիւնը, ծեսերն ու սովորութիւնները, երգն ու երաժշտութիւնը, ասանդական գիտելիքն ու աւօրեայ մշակոյթի բազմաթիւ դրսեւորումները, որոնք սերունդ սերունդ փոխանցուած են իրենց բնական միջավայրի մէջ, այսօր պահպանման եւ փաստագրման առանձնայատուկ կարիք ունին:

Շար.ը՝ էջ 6

Պատրաստեց՝ ՄԱՐԻՆԱ ԶԱՍՄՏԵԱՆ



ՔԵՍԱՊԻ ԳԻՒՂԵՐԸ՝ ԿԻԼԻԿԵԱՆ ԱՇԽԱՐՀԻ ՎԵՐԱՊՐՈՂ ՎԿԱՆԵՐԸ

ԱԼԵՔՍԱՆՏՐԵԹԻ ՍԱՆՃԱԳԸ ԵՒ ՔԵՍԱՊ ՈՒ ՇՐՋԱԿԱՅ ՀԱՅԿԱԿԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԸ

Քեսապ, ինչպես նաեւ Մուսա Լեռ եւ յարակից հայկական բնակավայրեր առաջին համաշխարհային պատերազմէն ետք Սուրիոյ Ալեքսանտրէթի ինքնավար Սանճագի կազմին մէջ մտած էին:

Արդարեւ, առաջին համաշխարհային պատերազմի աւարտէն ետք, եւ Մուտրոսի զինադադարէն մէկ ամիս չանցած, 27 նոյեմբեր 1918-ին ֆրանսական զինուորական իշխանութիւնները իրենց գրաման ենթարկուած շրջաններու վարչական կազմակերպման ձեռնարկած էին: Հայկաի վիլայէթին մաս կազմող Ալեքսանտրէթի, Անտիոքի, Պէյլանի եւ Հարիմի գաւառներէն կազմաւորուած էր Ալեքսանտրէթի ինքնավար Սանճագը:

Ֆրանսական գրաման զօրքերու հրամանատար եւ Սուրիոյ, Լիբանանի ու Կիլիկիոյ Բարձր կոմիսար զօրավար Հենրի Կուրօ 1 սեպտեմբեր 1920-ի հրամանագիրով ստեղծած էր Հայկաի, Դամասկոսի, Մեծն Լիբանանի եւ Ալուիներու պետութիւնները (Ճեպլէ Տրուզի պետութիւնը ստեղծուեցաւ 1921-ին): Ալեքսանտրէթի ինքնավար Սանճագը Հայկաի պետութեան կազմին մէջ ընդգրկուած էր:

Բարձր կոմիսարի հրամանագիրով Ալեքսանտրէթի Սանճագի տարածքը ընդարձակուեցաւ եւ անոր կազմին մէջ մտաւ Զենիսպայի գաւառը:

Ալեքսանտրէթի Սանճագի վարչական յատուկ ռեժիմը օրէնքի ուժ ստացաւ 8 օգոստոս 1921-ի հրամանագիրով: Վարչական յատուկ ռեժիմը Հայկաի կառավարութեան իրաւասութիւնները կը սահմանափակէր եւ լայն իրաւասութիւններ կու տար Սանճագի մուքասարիֆին:



Ալեքսանտրէթ

Ֆրանսական տիրապետութեան դեմ 1925-ի ամրան Սուլթան Աթաթիքի գլխաւորութեամբ ապստամբութիւն բարձրացաւ Ճեպլէ Տրուզի մէջ: Քաֆրի եւ Մազրաայի մէջ ֆրանսական զօրքերը ծանր հարուած ստացան: Կռիւները հասան

Դամասկոսի շրջակայքը: Տիրապետող իշխանութիւնները ետ մղեցին Ճեպլէ Տրուզի վրայ ֆրանսական բանակի յարձակումը: Ապստամբութիւնը ընդգրկեց Նորանոր շրջաններ: Հոկտեմբերին (1925) պետեի ապստամբ ցեղախումբերը մտան Համա: Նոյն օրերուն Դամասկոսի մէջ համաժողովողական ապստամբութիւն բարձրացաւ եւ ֆրանսական բանակը թողնուեց իրենց քաղաքը:

Ֆրանսական կառավարութիւնը 23 դեկտեմբեր 1925-ին Սուրիոյ եւ Լիբանանի մէջ Բարձր կոմիսար Նշանակեց Հենրի տը ժուվենէլը:

Ֆրանսական բանակը, տիրապետող իշխանութիւնները ճնշելով, 1926-ի ապրիլ 25-ին գրաւեց Սուլթան: Մինչեւ 1927 ճնշուեցան ապստամբութեան միւս օճախները:

Ֆրանսական իշխանութիւնները, հաշու առնելով Սուրիոյ մէջ բարձրացած իրեքայաջորդ ապստամբութիւնները, իրենց դիրքերը պահպանելու համար, փորձեցին Թուրքիոյ նեցուկը ապահովել:

Անգարայի մէջ 30 մայիս 1926-ին թուրք-սուրիական բարի դրացնութեան համաձայնագիրը ստորագրուեցաւ: Այս համաձայնագիրով Ֆրանսա Ալեքսանտրէթի Սանճագի հիւսիսային կողմէն, Փայասի մօտակայքէն մինչեւ Քիլիս հասնող սահմանային գօտիէն հողեր զիջեցաւ Թուրքիոյ:

Այսպիսով Թուրքիա տիրացաւ Փայասի երկաթուղային կայարանին եւ իրաւունք ստացաւ զինուորական փոխադրումներ կատարելու Փայասէն Մէյտան Ելպէզ եւ Հայկա կայարաններով:

Հենրի Փոնսօ 1926 օգոստոսին Սուրիոյ եւ Լիբանանի մէջ Բարձր կոմիսար Նշանակուեցաւ, փոխարինելով Հենրի տը ժուվենէլը:

Հենրի Փոնսօ 14 մայիս 1930-ին հրապարակեց «Հիմնական սահմանադրական կանոնադրութիւններ» հրամանագիրը:

Ալեքսանտրէթի ինքնավար Սանճագին վերաբերող բաժինին մէջ կ'ընտրէր, որ շրջանը կը վայելէ յատուկ կարգավիճակ, եւ յատուկ ռեժիմը կը կարգաւորուի Սանճագի մուքասարիֆին եւ վարչական խորհուրդին շնորհուած լիազօրութիւններով:

Սանճագի մուքասարիֆը լայն իրաւասութիւններ ուներ եւ Սուրիոյ պետութեան ղեկավարի անունով կը Նշանակէր Նահիբներու միտիրները: Վարչական խորհուրդի 12 անդամներէն ինը կ'ընտրուէին, իսկ մնացեալ երեքը կը Նշանակուէին մուքասարիֆին կողմէ:

Ալեքսանտրէթի ինքնավար Սանճագը, յատուկ ռեժիմին եւ «Հիմնական սահմանադրական կանոնադրութիւններ»-ուն համաձայն, վարչական, տնտեսական եւ մշակութային շատ լայն արտօնութիւններ կը վայելէր: «Թուրք ցեղին պատկանող բնակիչներ»-ը լեզուական ու մշակութային առանձնայատուկ իրաւունքներ ունէին, իսկ թրքերէնը, արաբերէնի կողքին, պաշտօնական լեզու կը նկատուէր:

Սանճագի մուքասարիֆը 1923-էն ի վեր թուրք մըն էր՝ Իպրահիմ Էտիէմ Մուսէմ:

Սուրիոյ եւ Լիբանանի Բարձր կոմիսարը Սանճագի մէջ իր փոխ պատուիրակը ուներ, որ կ'իրականացնէր տեղական գործադիր իշխանութեան լիազօրութիւնները: 1924-էն ի

վեր Բարձր կոմիսարի փոխ պատուիրակն էր Փիեռ Տիւրեօ, որ Նախապէս Թուրքիոյ մէջ Ֆրանսայի հիւպատոս եղած էր, սահուն թրքերէն կը խօսէր եւ մօտիկ յարաբերութիւններ ուներ թուրքերու հետ: Կ'ընտրէր, որ ան եղաւ Սանճագը Թուրքիոյ միացնելու ծրագիրը յղացողը:

Սանճագի ներքին ապահովութեան՝ ոստիկան-զօրաց հրամանատարութիւնը, ֆրանսացի մէկ սպայի, մէկ ենթասպայի եւ տեղացի հինգ սպաներու ղեկավարութեամբ, ուղղակի փոխ պատուիրակութեան ենթակայ էր:

Սանճագի ֆրանսական տեղական իշխանութիւնները, ի հաշիւ եւ յօգուտ թուրք փոքրամասնութեան, միշտ ջանացած էին տեղացի մեծամասնութիւն կազմող արաբները հեռու պահել պատասխանատու պաշտօններէ: Հայերն ալ հեռու պահուած էին պատասխանատու պաշտօններէ:

Պետական բարձր պաշտօնները մեծ մասամբ թուրքերուն ձեռքն էր, մինչդեռ թուրքեր Սանճագի բնակչութեան 23 առ հարիւրը կը կազմէին:

Պետական պիտոճով պահուող թրքական դպրոցներուն մէջ ուսուցումը ամբողջութեամբ թրքերէնով կը կատարուէր, թրքական պետական ուսումնական ծրագիրով եւ Թուրքիայէն ուղարկուած դասագիրքերով:

Ֆրանսական տեղական իշխանութիւնները, «Բաժնէ՝ որ տիրես»-ի քաղաքականութեամբ, Սանճագի բնակչութիւնը ազգային եւ դաւանական պատկանելիութեան հիմամբ միլիթներու բաժնեցին:

Այսպիսով, մեծամասնութիւն կազմող արաբներէն կազմաւորուեցան արաբ ալուի, արաբ սուննի, արաբ յոյն ուղղափառ, արաբ յոյն կաթոլիկ, արաբ սաորի-քաղդէացի եւ արաբ բողոքական միլիթները:

Թուրքերը, ցեղախմբային թուրքմէները (որոնցմէ են Քեսապի շրջակայքը, Կասիոս լեռան լանջերուն բնակող չանտըրցիները, ինչպէս նաեւ Ամուքի դաշտերուն ու Ամանոսի լեռներուն մէջ կեդրոնացած խաշնարած խմբաւորումները), թրքախօս եւ թրքացած արաբները եւ չերքէզները կազմաւորուեցան իբրեւ թուրք միլլէթ:

Հայերը բաժնուեցան հայ գրիգորեան (առաքելական), հայ կաթոլիկ, լատին եւ հայ բողոքական միլիթներու: Անոնցմէ միայն հայ գրիգորեան (առաքելական) միլլէթը պետական պաշտօնական փաստաթուղթերու եւ վիճակագրութիւններու մէջ «հայ համայնք» կը նկատուէր, իսկ միւս յարանուանութիւնները «այլ քրիստոնէաներ» կը նկատուէին:

Սանճագի հայութիւնը միլլէթներու մասնատելով, անոնց թուաքանակը զգալիօրէն նուազ ցոյց կը տրուէր:

Ֆրանսական տեղական իշխանութիւնները Սանճագի բոլոր հայերը անխտիր «գաղթական» եւ «եկուոր» կը ներկայացնէին:



Պէյլան

Սակայն շրջանի հայերուն բացարձակ մեծամասնութիւնը բնիկ էր, շատ աւելի հին եւ Նախաբնիկ՝ քան թուրքերը եւ այլ խմբաւորումներ:

Բնիկ հայկական բնօրրաններ են Քեսապը, Մուսա Լեռը, Պէյլանը, Աթիկը, Սովուք Օլուքը, իսկ Անտիոքի եւ այլ շրջաններու մէջ հայեր ապրած են հին դարերէն:

Արդարեւ, Անտիոքի հետ հայեր առնչութիւն ունեցած են Մեծն Տիգրանի ժամանակներէն. քիւզանդական տիրապետութեան ժամանակ հայեր բազմացած են քաղաքին մէջ, մեծապէս օգնած են խաչակիրներուն եւ ազդեցիկ եղած են Անտիոքի դքսութեան կազմէն ներս: Անտիոքի մէջ հայեր իրենց գոյութիւնը պահած էին մեմլուքներու տիրապետութեան ժամանակ եւ Օսմանեան կայսրութեան կազմէն ներս:

Ալեքսանտրէթի Սանճագի հայութեան փոքր համեմատութիւնը եկուոր էր: Անոնք Կիլիկիոյ պարպումին ժամանակ, 1921-1922-ին սահմանին միւս կողմը, քանի մը քիլոմէթր անդին մնացած Տեորթ Եռլի եւ շրջակայքի հայեր էին, որոնք զուխաւորաբար Ալեքսանտրէթ քաղաքին, Քրոք Խանի եւ Ռիհա-Լիէի մէջ բնակութիւն հաստատած էին:



Անտիոք

Բարձր կոմիսարը 21 սեպտեմբեր 1921-ի հրամանագիրով, «տնտեսական պատճառներով» Սանճագէն անջատեց մեծամասնութեամբ արաբներով բնակեցուած Հարիմի եւ Զենիսպայի գաւառները:

Անգարայի մէջ 21 հոկտեմբեր 1921-ին, Ֆրանքլին-Պոլիոնի եւ Մուսթաֆա Բեմալի միջեւ ստորագրուած համաձայնագիրի 7-րդ յօդուածով պաշտօնապէս կը հաստատուէր Ալեքսանտրէթի յատուկ ռեժիմը եւ թուրքերուն նոր առանձնաշնորհումներ կը խոստացուէին: Յօդուածը կ'ընդգծէր, որ «Ալեքսանտրէթի Սանճագի շրջանի թուրք ցեղին պատկանող բնակիչները բոլոր դիւրութիւնները կը վայելեն իրենց մշակութիւնը զարգացման համար: Թրքերէնը պաշտօնական լեզու կը նկատուի»:

Սուրիական պետութիւններու համադաշնակցութեան կազմաւորումէն ետք, 28 յունիս 1928-ին, Ալեքսանտրէթի Սանճագը, իբրեւ Հայկաի պետութեան մաս, ընդգրկուեցաւ Սուրիոյ համադաշնակցութեան կազմէն ներս, պահպանելով իր յատուկ ռեժիմը:

Լոզանի 24 յուլիս 1923-ի դաշնագիրով միջազգայնօրէն հաստատուեցաւ Թուրքիա-Սուրիա սահմանագիծը:

Բարձր կոմիսար Մորիս Սերրայի 5 դեկտեմբեր 1924-ի հրամանագիրով Սուրիոյ համադաշնակցութիւնը լուծարքի ենթարկուեցաւ եւ կազմաւորուեցաւ Սուրիոյ պետութիւնը: Ալեքսանտրէթի ինքնավար Սանճագը, Սուրիոյ պետութեան կազմէն ներս, պահեց իր յատուկ ռեժիմը:



Քեսապ

ԵՐՐՈՊԱԿԱՆ ՖՈՒԹՊՈԼ

- ՊԱՐՄԵԼՈՆԱ, ՄԱՆՉԵՍԹԵՐ ՍԻԹԻ ԵՒ ՏՈՐԹՄՈՒՆՏ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԿԵՏԵՐ ՀԱՒԱՔԱԾ ԵՆ - ԻՏԱԼԻԱ՝ ԲՈՒՌՆ ՊԱՅՔԱՐ

Այս տարեշրջանի ՖԻՖԱ-ի առաջին դադարեն առաջ, Եւրոպայի 5 գլխաւոր լիկաներուն մէջ որոշ չափով պայքարող խումբերը կը յստականան:

Սպանիոյ մէջ 7 հանգրուաններ կատարուած են, Անգլիոյ, Ֆրանսայի եւ Իտալիոյ մէջ՝ 5 հանգրուաններ, մինչ Գերմանիոյ մէջ 4 հանգրուաններ խաղցըւած են դադարեն առաջ:

Անգլիոյ մէջ, Մանչեսթըր Սիթի իր 5 մրցումներն ալ յաղթանակներով աւարտած է, մինչ անցեալ տարուան ախոյեան Արսենալ, որ «Չեմփիընզ լիկ»-ի աւարտականի ալ հասած էր, լաւ վիճակի մէջ կը



գտնուէր, բայց շաբաթավերջին 3-0 արդիւնքով անակնկալ պարտութիւն մը կրելէ ետք Պրայթընէն, նահանջեց Բ. դիրք: Պրայթըն կը գրաւէ 3-րդ դիրքը, մինչ Պրենթֆորտ եւ Լիծ կ'ամբողջացնեն առաջին հնգեակը: Պէտը Ե ըսել, որ Պրենթֆորտ, Լիծ, Լիվըրփուլ եւ Էվըրթըն 9-ական կէտեր ունին եւ վերին դիրքերուն համար կը պայքարին:

Թոթենհամ 2 կէտով կը գրաւէ վերջին դիրքը: Սպանիոյ մէջ, Պարսելոնա շատ լաւ վիճակի մէջ կը գտնուի եւ իր առաջին 7 մրցումներն ալ յաղթած է՝ նշանակելով 31 կոլեր: Կոլ-սքորըրներու առաջին եր-



կու դիրքերն ալ կը գրաւեն խմբապետ Ռաֆինիա (12 կոլ) եւ Լամին Եամալ (7 կոլ):

Ռեալ Մատրիտ կրեց այս տարեշրջանի իր երկրորդ պարտութիւնը՝ Աթլէթիքո Մատրիտի դէմ մայրաքաղաքի տերափին: Այս մրցումէն ետք փորթուգալի մարզիչ Ժոզէ Մուրինիո խիստ ձեւով քննադատած էր օրուան իրաւարարը՝ որ դաշտէն վտարած էր Տին Յաուսընը:

Քիլիան Եմպպիէ նշանակած է 7 կոլ, բայց Ռեալ Մատրիտ 4-րդ դիրքը կը գրաւէ 15 կէտերով՝ մէկ կէտով ետ մնալով Աթլէթիքո Մատրիտէն եւ Պէթիսէն: Այս երկու խումբերն ալ Ռեալ Մատրիտին կրցան յաղթել այս ամիս:

Իտալիոյ «Սերի Ա.»-ն այս տարեշրջանին շատ հետաքրքրական կը թուի ըլլալ, ինչպէս կը խոստանայ առաջին 5 հանգրուաններէն ետք:

Ա. Եւ. Ռոմա եւ Ինթեր Միլան իրենց 4 մրցումները յաղթելէ ետք, շաբաթ օր իրար դէմ մրցած էին Իտալիոյ մայրաքաղաքին մէջ:



Առաջին կիսախաղին 2-0 արդիւնքով յառաջանալէ ետք, Ռոմա Բ. կիսախաղին 2 կոլ ստացաւ ախոյեան Ինթերին դէմ եւ մրցումը վերջ գտաւ հաւասարութեամբ:

Գ. դիրքը գրաւեց Լացիո Ռոմա, որ Ինթերին եւ Ռոմային նման 13 կէտեր ունի:

Քալիարի (4-րդ), Ա. ՄԵ. Միլան, Ֆրոսինոնէ, Եուվենթուս եւ Զոմօ կը գրաւեն մինչեւ 8-րդ դիրքը: Զոմօ (10 կէտ) 3 կէտով ետ կը մնայ միայն պարագլուխի դիրքէն, եւ այդ պատճառով այս տարեշրջանը «տաք» կը թուի ըլլալ:

Ֆրանսայի մէջ Մոնպէ 13 կէտ կրցած է ձեռք ձգել Կարելի 15-էն եւ 2 կէտով կը գերազանցէ Լիոնն ու



Փարիզ Ֆ. Զ. ակումբը: Կը սպասուէր, որ վերջին տարիներու ախոյեան Փարիզ Սեն Ժերմէն առնուազն առաջին 5 դիրքերէն մէկը գրաւէր, բայց ան այժմ 6-րդ դիրքը կը գրաւէ 8 կէտերով:

Մարսել կը գրաւէ 17-րդ եւ նախավերջին դիրքը: Գերմանիոյ մէջ Պորուսիա Տորթնուտ իր 4 մըր-



ցումներն ալ յաղթած է եւ 2 կէտով կը գերազանցէ Պայերն Միւնիխն ու Ֆրայպուրկը:

1970-ականներու լաւագոյն խումբերէն Պորուսիա Մետշընկլատպախ առանց կէտի կը գրաւէ վերջին դիրքը:

105 ՀԱԶԱՐ ՀԱՄԱԿԻՐ ԵՒ ՄԵՍՍԻՒ ՀՐԱԺԵՇՏԻ ՄՐՑՈՒՄԸ



Պարսելոնայի նախագահ Ժոան Լափորթա ակումբի գլխաւոր վեհաժողովի ընթացքին խօսած է քաթալաններու ակումբի նախկին յառաջապահ Լիոնէլ Մեսսիի հրաժեշտի մրցումին կազմակերպման մասին:

«Մենք արդէն իսկ նշած ենք, որ երբ մարզադաշտը վերջնականապէս պատրաստ ըլլայ, անոր պատուոյն յատուկ արարողութիւն պիտի կազմակերպենք: Կար տարբերակ մը, որ ան տարեշրջան մը եւս խաղար մեր ակումբին հետ, բայց արժանիքն այլ որոշում տուաւ: Մենք մեծ ուրախութեամբ կը կազմակերպենք մեծարանքի այդ երեկոն», ըսաւ Լափորթա:

Սկզբունքով «Զամի Լու»-ի շինարարական աշխատանքները վերջնականապէս կ'աւարտին 2028-ի սկիզբը, որմէ ետք մարզադաշտը պիտի կարենայ ընդունիլ 105 հազար համակիրներ:

Նշենք, որ Մեսսի Ինթեր Մայեմիի հետ իր վերջին մրցումին նշանակեց կոլ մը, որ իր ասպարեզի 930-րդն էր: Ազատ հարուածով նշանակած անոր կողմ պատմական էր: Այդ կողմ թիւ 75-ն էր ազատ հարուածով, որուն շնորհիւ ան կրցաւ գերազանցել պրագիցի ժայիր Տա Ռոզա Փինթոն (74 կոլ):

Համաշխարհային բացարձակ մրցանիշը կը պատկանի այլ պրագիցիի մը՝ Մարտինո Զարիթայի, որ 78 կոլ նշանակած է ազատ հարուածով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԵՐԱՆԿԱՆԱՑՄԱՆ ՏՕՆԻՆ ԱՌԻԹՈՎ՝

ԱՐՄԱՆ ՄԻՆԱՍԵԱՆ ՆՈՐ ՄՐՑԱՆԻՇ ՀԱՍՏԱՏԵՑ

Հայ աթլէթ մարզիչ Արման Մինասեան համաշխարհային նոր մըրցանիշ մը հաստատեց 30 երկվայրկեանի ընթացքին 57 փուլ-ափ կատարելով, մէկ ոտքի վստահելով եւ կռնակը 18 քլ պայուսակ մը ունենալով:

Ան իր այս մրցանիշը նուիրեց Հայաստանի վերանկախացման բալլետէլէ ետք եգիպտացի աթլէթի մը նախկին մրցանիշը:

Մինասեան արիւտաւարժ մարզիչ մըն է, որ նախապէս այլ մրցանիշներ ալ հաստատած է բռնկեցող փուլ-ափի եւ երկու մատներով փուլ-ափի:



ՃԱՏՐԱԿ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՂԱՔԸ ՀԱՒԱՍԱՐԵՑԱՆ ՉԻՆԱՍՏԱՆԻ ՀԵՏ ԵՒ ՅԱՂԹԵՑԻՆ ԻՐԱՆԻ



Ճատրակի 46-րդ Օլիմպիատան կը շարունակուի Սամարգանտի մէջ, ուր տեղի ունեցան 5-րդ եւ 6-րդ հանգրուանի մրցումները: Հայաստանի տղաքը դժուար մրցակից մը ունէին ի դէմս Չինաստանի, բայց Հայկ Մարտիրոսեան, Ռոպերթ Յովհաննիսեան, Շանթ Սարգսեան եւ Մանուէլ Պետրոսեան կրցան հաւասարութիւններ խլել աւելի բարձր դասուած Չինաստանի ներկայացուցիչներուն հետ:

Օր մը ետք, Հայաստան մրցեցաւ Իրանի դէմ եւ կրցաւ յաղթանակ ապահովել՝ շնորհիւ Գաբրիէլ Սարգսեանի: Հայկ Մարտիրոսեան, Ռոպերթ Յովհաննիսեան եւ Շանթ Սարգսեան հաւասարութիւններ արձանագրած էին իրենց իրանցի մրցակիցներուն հետ,

բայց Գաբրիէլ Սարգսեանի յաղթանակը շատ կարեւոր էր 2,5-1,5 արդիւնքով յառաջխաղացք արձանագրելու համար:

Այս յաղթանակէն ետք, տղոց հաւաքականը գրաւեց 3-րդ դիրքը, Ուզպէքիստանի եւ Չինաստանի ետին: Ուզպէքիստան 12 կէտ ունի, մինչ Չինաստան եւ Հայաստան՝ 11 կէտ:

Աղջկանց հաւաքականը 5-րդ հանգրուանին մրցեցաւ Փերուի դէմ եւ 3-1 արդիւնքով կարեւոր յաղթանակ մը տարաւ: Մարիամ Մկրտչեան եւ Անահիտ Մկրտչեան յաղթանակներ նշանակեցին, մինչ Լիլիթ Մկրտչեան եւ Էլիսա Դանիէլեան հաւասարութիւններ արձանագրեցին:

Շաբ.ը՝ Էջ 8

ԱԶԳԵՐՈՒ ԼԻԿԱ

ՎԱՂԸ՝ ՆԵՏԵՐԼԱՆՏՆԵՐ - ԳԵՐՄԱՆԻԱ

Վաղը կը սկսի Եւրոպայի Ազգերու լիկայի 2026-2027 տարեշրջանի մըրցաշարը:

Առաջին կարգի Բ. խմբակին մէջ, Նետերլանտներ - Գերմանիա մրցումը կը խոստանայ հետաքրքրական ըլլալ: Երկու խումբերն ալ նոր մարզիչներ ունին: Պատմական մարզիչ Եուրկեն Զլոի տարիներով յաջողութիւններ նուաճելէ ետք Տորթնուտի եւ Լիվըրփուլի հետ ստանձնեց Գերմանիոյ ազգային խումբը:

Նետերլանտներու մարզիչ նշանակուեցաւ սպանացի պատմական միջնապահ Չալի Դեմանտես, որ պիտի փորձէ նոր խաղածել որդեգրելով նոր էջ մը բանալ Նետերլանտներու պատմութեան մէջ:

Զլոի իր կարգին նոր «շունչ» պիտի փորձէ հաղորդել գերմանական ֆութպոլին, որ 2014-ի տիտղոսէն ետք մասնաւոր ոչինչ կրցաւ ձեռք բերել:

Ստորեւ կը ներկայացնենք Ազգերու լիկայի առաջին շաբթուան յայտագիրը:

Ա. ԿԱՐԳ

- **ՎԱՂԸ** Նետերլանտներ - Գերմանիա Սերպիա - Յունաստան Փորթուգալ - Կալէս Նորվեկիա - Դանիա
- **ՈՒՐԲԱԾ** Թուրքիա - Ֆրանսա

Իտալիա - Պելճիքա Անգլիա - Սպանիա Չեխիա - Խրուաթիա

Բ. ԿԱՐԳ

- **ՎԱՂԸ** Աստրիա - Իսրայէլ Զոսովօ - Իրլանտա
- **ՈՒՐԲԱԾ** Վրաստան - Հիւսիսային Իրլանտա Հունգարիա - Ուքրանիա Լեհաստան - Պոնիա Շուէտ - Ռումանիա
- **ՇԱՔԱԾ** Սլովենիա - Սլովակիա Մակեդոնիա - Չուիցերիա

Գ. ԿԱՐԳ

- **ՈՒՐԲԱԾ** Հայաստան - Լաթվիա Մոնթենէկրօ - Կիպրոս
- **ՇԱՔԱԾ** Ֆարօ Կոկիներ - Դազախստան Իսլանտա - Եսթոնիա Սան Մարինօ - Ֆինլանտա Պուկկարիա - Լիքսամպուրկ Ալպանիա - Պիլժոռուսիա Սլովակիա - Մոլտովա

Դ. ԿԱՐԳ

- **ՎԱՂԸ** Աստորրա - Մալթա Լիխթենշթայն - Լիթուանիա

